ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 48-Ա 26 հունվարի 2026 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԿԵՐՏԻ ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՐՓԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ, 164-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 60-րդ կետի պահանջն, ինչպես նաև Արփինե Ալեքսանյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լեռնակերտի Վարուժան Բարեղամյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Արփինե Ալեքսանյանին տրամադրել 2025-2026 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2026 թվականի փետրվարի 2-ից 2026 թվականի մարտի 6-ը ներառյալ (25 աշխատանքային օր):

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լեռնակերտի Վարուժան Բարեղամյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Արփինե Ալեքսանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների և

պարտականությունների կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լեռնակերտի Վարուժան Բարեղամյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Նարե Նալբանդյանին (առանց վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

26.01.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ